

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1**

ք. Երևան

«23» սեպտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Լոռու մարզի գ. Հազվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերութայնների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերութայնների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերութայններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Այլուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախազձանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **616 099 999.68 (վեց հարյուր տասնվեց միլիոն իննսունինը հազար ինը հարյուր իննսունինը դրամ վաթսուներ լումա) ՀՀ դրամ, որից 102 683 333.28 (մեկ հարյուր երկու միլիոն վեց հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ քսանութ լումա) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:**

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

¹ Վճարման ժամանակացույցը տրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հենք միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 4, N 4.1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան

համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագրի կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ
 կառավարական տուն 3
 ՀՀ ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Վ. Ա. Կարամյան
 (ստորագրություն)



[Handwritten signature]

ԿԱՊԱԼԱՐՈՒ՝


«ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ
 ք. Երևան, Մամիկոնյանց 24/2
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1930051581030100
 ՀՎՀՀ 03313519

Տնօրեն՝

[Handwritten signature]
 (ստորագրություն)

Ա Դավթյան

48



[Three handwritten signatures]

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՎՈՐՈՒՄ
«Հ Լոռու մարզի գ. Հազվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|-----|---|----------|--------|----------------|---------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |
| | | | | | |
| 1 | III-րդ կարգի գրունտների մշակում խրամտալիներում 0 6մ3 շերտի տարողությամբ էքսկավատորով, կողից | խմ | 1095 | 611.00 | 669,045.00 |
| 2 | III-րդ կարգի գրունտների քանդում ձեռքով | խմ | 105 | 3,436 00 | 360,780 00 |
| 3 | Հանքավայրում ետիցքի համար պահանջվող պակաս գրունտի բարձում ավտոմեքենաների վրա | խմ | 1622 | 389.00 | 630,958 00 |
| 4 | Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա | խմ | 1622 | 1,111 00 | 1,802,042 00 |
| 5 | Գրունտի ետիցք բուլդոզերով | խմ | 2072 | 555 00 | 1,149,960 00 |
| 6 | Գրունտի աստիճանաբար տրամադրում օդաճնշական ձեռքի տրամադրում | խմ | 2072 | 333 00 | 689,976 00 |
| 7 | Գրունտի ետիցք ձեռքով, տրամադրում | խմ | 750 | 555.00 | 416,250 00 |
| | | | | | 5,719,011.00 |
| | | | | | |
| 8 | Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով | խմ | 11.5 | 34,163 00 | 392,875.00 |
| 9 | Խամքարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով | խմ | 647 | 34,163.00 | 22,103,461 00 |
| 10 | Խամքարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B- 7.5 դասի բետոնով | խմ | 8 3 | 34,163 00 | 283,553.00 |
| 11 | Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5դասի բետոնով | խմ | 35 4 | 34,163 00 | 1,209,370.00 |
| 12 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 287 95 | 68,327 00 | 19,674,760.00 |
| 13 | Ամրան Փ8A240C | տն | 7 121 | 384,336 00 | 2,736,857.00 |
| 14 | Ամրան Փ16A500C | տն | 5 572 | 384,336.00 | 2,141,635.00 |
| 15 | Ամրան Փ18A500C | տն | 4 442 | 384,336.00 | 1,707,067.00 |
| 16 | Ամրան Փ25A500C | տն | 0 115 | 384,333 00 | 44,275 00 |
| 17 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 5.1 | 68,327 00 | 348,468 00 |
| 18 | Ամրան Փ8A240C | տն | 0 510 | 384,336 00 | 196,011 00 |
| 19 | Ամրան Փ22A500C | տն | 1 742 | 384,336.00 | 669,513 00 |
| 20 | Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ. | տն | 0 232 | 384,336 00 | 89,204 00 |
| 21 | Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B-20 դասի բետոնով | խմ | 169 65 | 68,327.00 | 11,591,676.00 |
| 22 | Ամրան Փ6, 8A240C | տն | 1.452 | 384,337 00 | 558,096 00 |
| 23 | Ամրան Փ10A500C | տն | 2.599 | 384,338.00 | 998,894 00 |
| 24 | Ամրան Փ12A500C | տն | 8 407 | 384,336 00 | 3,231,074 00 |
| 25 | Ամրան Փ16A500C | տն | 0 431 | 384,337.00 | 165,496 00 |



| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|-----|--|----------|--------|----------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 26 | Ամրան Փ22A500C | տն | 1 325 | 384,336 00 | 509,399.00 |
| 27 | Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ | տն | 0 238 | 384,337 00 | 91,280 00 |
| | Ամրան փայտե սյուների համարում 27 800 միջոց դառն | | | | 58 772 964 00 |
| 28 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 59.5 | 68,668 00 | 4,085,746 00 |
| 29 | Ամրան Փ8A240C | տն | 2.341 | 386,259 00 | 904,228 00 |
| 30 | Ամրան Փ16, Փ18A500C | տն | 0 050 | 386,266 00 | 19,429 00 |
| 31 | Ամրան Փ22A500C | տն | 6 940 | 386,259 00 | 2,680,599 00 |
| 32 | Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ | տն | 0 010 | 386,268 00 | 4,017 00 |
| 33 | Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 0.5 | 68,669 00 | 34,335 00 |
| 34 | Ամրան Փ8A240C | տն | 0 023 | 386,268.00 | 9.039 00 |
| 35 | Ամրան Փ16, Փ18A500C | տն | 0 051 | 386,264 00 | 19,777 00 |
| 36 | Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով | խմ | 10.20 | 68,668 00 | 700,414 00 |
| 37 | Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով | խմ | 123.42 | 68,668 00 | 8,475,005 00 |
| 38 | Ամրան Փ6, 8A240 | տն | 3.220 | 386,259.00 | 1,243,928.00 |
| 39 | Ամրան Փ8A500C | տն | 0 643 | 386,259 00 | 248,249 00 |
| 40 | Ամրան Փ12A500C | տն | 1.797 | 386,259 00 | 694,169 00 |
| 41 | Ամրան Փ16A500C | տն | 1,497 | 386,258.00 | 578,035 00 |
| 42 | Ամրան Փ18A500C | տն | 4 019 | 386,259 00 | 1,552,414 00 |
| 43 | Ամրան Փ25A500C | տն | 0.092 | 386,256 00 | 35,613 00 |
| 44 | Ամրան Փ28A500C | տն | 0.744 | 386,259.00 | 287,338 00 |
| 45 | Պողպատե թերթից ներդիրների տեղադրում | տն | 0.190 | 386,259.00 | 73,389 00 |
| 46 | Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 23 14 | 68,668 00 | 1,588,978 00 |
| 47 | Ամրան Փ6, 8A240 | տն | 0 534 | 386,259.00 | 206,417 00 |
| 48 | Ամրան Փ12A500C | տն | 1.357 | 386,259.00 | 523,999 00 |
| 49 | Ամրան Փ18A500C | տն | 0 149 | 386,261 00 | 57,476 00 |
| 50 | Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սնամեջ բետոնե ըլուկներով | խմ | 149.4 | 30,987 00 | 4,629,210 00 |
| 51 | Նույնի բետոնացում, B-20 դասի բետոնով, ամրանավորումով | խմ | 95 53 | 68,668.00 | 6,559,854 00 |
| 52 | Ամրան Փ6, 8A240C | տն | 0 724 | 386,259 00 | 279,756 00 |
| 53 | Ամրան Փ10A500C | տն | 8 657 | 386,259.00 | 3,343,999.00 |
| 54 | Ամրան Փ12A500C | տն | 7 041 | 386,259 00 | 2,719,495 00 |
| 55 | Ամրան Փ16A500C | տն | 1 002 | 386,258 00 | 386,876 00 |
| 56 | Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով | խմ | 1 63 | 60,084 00 | 97,937 00 |
| 57 | Ամրան Փ6A240 | տն | 0 051 | 386,258 00 | 19,699 00 |
| 58 | Ամրան Փ12A500C | տն | 0.221 | 386,259.00 | 85,363.00 |
| 59 | Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3,3նիշի վրա B-20դասի բետոնով | խմ | 186 5 | 66,093 00 | 12,326,345 00 |
| 60 | Ամրան Փ6,8A240 | տն | 0.357 | 386,260 00 | 137,818 00 |
| 61 | Ամրան Փ12A500C | տն | 16 051 | 386,259.00 | 6,199,959 00 |
| 62 | Ամրան Փ14A500C | տն | 5 701 | 386,259 00 | 2,202,178 00 |
| 63 | Ամրան Փ18A500C | տն | 0 026 | 386,282.00 | 9,889 00 |
| 64 | Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով | խմ | 6 80 | 68,668 00 | 466,942 00 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|--|----------|--------|----------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 65 | Ամրան Փ8A240 | տն | 0.184 | 386,260.00 | 70,917 00 |
| 66 | Ամրան Փ18A500C | տն | 0.367 | 386,260 00 | 141,835.00 |
| 67 | Միաձույլ ե/բ հովհարի պատրաստում +2,7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՄ-1, +հեծան ՄՀ-1) | խմ | 1 7 | 68,669.00 | 116,737 00 |
| 68 | Ամրան Փ8A240 | տն | 0 029 | 386,256 00 | 11,086.00 |
| 69 | Ամրան Փ8A500C | տն | 0 073 | 386,268 00 | 28,120.00 |
| 70 | Ամրան Փ12A500C | տն | 0 008 | 386,305.00 | 3,090.00 |
| 71 | Ամրան Փ16A500C | տն | 0 046 | 386,263 00 | 17,768.00 |
| 72 | Ամրան Փ18A500C | տն | 0.015 | 386,273 00 | 5,794 00 |
| 73 | Բետոնե աստիճանների պատրաստում 0,00 նիշից դեպի +0,45նիշ B-7.5 դասի բետոնով | խմ | 2.3 | 34,334 00 | 78,968.00 |
| 74 | ՄՄ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0.45նիշից դեպի +3,3նիշ) | խմ | 1 9 | 68,669.00 | 130,471 00 |
| 75 | Նոյնի. բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով | խմ | 0.5 | 34,334 00 | 17,167 00 |
| 76 | Ամրան Փ8A240 | տն | 0 055 | 386,262 00 | 21,129 00 |
| 77 | Ամրան Փ16A500C | տն | 0.274 | 386,261.00 | 105,797 00 |
| Ընդամենը Երեսույթի ընդհանուր արժեքը (մեծագույնը) | | | | | 64 236 793 00 |
| Միջնորմեր | | | | | |
| 78 | Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով) | քմ | 397.58 | 4,698.00 | 1,867,831.00 |
| 79 | Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով | խմ | 110 8 | 21,352 00 | 2,365,161 00 |
| 80 | Ամրան Փ8A500C | տն | 2.760 | 384,337.00 | 1,060,609 00 |
| Ընդամենը Միջնորմեր | | | | | 5 293 601 00 |
| Վերին մասերի աշխատանքներ | | | | | |
| 81 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ | քմ | 36.31 | 64,056.00 | 2,325,720 00 |
| 82 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ) | քմ | 1 92 | 64,056.00 | 122,988.00 |
| 83 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան) | քմ | 1.20 | 61,494.00 | 73,793.00 |
| 84 | Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3– V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս | քմ | 17.04 | 59,786 00 | 1,018,753.00 |
| 85 | Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ) | քմ | 2.30 | 55,515 00 | 127,907.00 |
| 86 | Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ | քմ | 25 0 | 38,433.00 | 961,978.00 |
| 87 | Ներքին, ապակեպատ, երկգույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1 | հատ | 9 | 55,515 00 | 499,635 00 |
| 88 | Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2—Դ-3 | հատ | 41 | 55,515 00 | 2,276,115 00 |
| 89 | Ներքին երկփեղկանի դռներ (маятниковые двери)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենտապոլիստիրոլ, երեսապատման շերտը 1,5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4—Դ-4* | հատ | 4 | 55,515.00 | 222,060.00 |
| 90 | Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5 | քմ | 1 7 | 42,704.00 | 72,614.00 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|-------------------------------------|---|----------|----------|----------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 91 | Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով | քմ | 3.4 | 38.434 00 | 130.676 00 |
| 92 | Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6 | քմ | 5.3 | 38.433 00 | 201.881 00 |
| 93 | Սանհանգույցի էկրանների տեղադրում | քմ | 12.6 | 29.892 00 | 376.639 00 |
| 94 | Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ | քմ | 89.3 | 38.433 00 | 3,432,451 00 |
| 95 | Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ | քմ | 64.2 | 29.892 00 | 1,918,229 00 |
| 96 | Մետաղապլաստե, քաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ | զծմ | 80.1 | 4.405 00 | 352.664.00 |
| Ընդամենը դռներ և պատուհաններ | | | | | 17,114,103.00 |
| Հանդիմանք | | | | | |
| 97 | Հողի տոփանում խճաքարով | քմ | 1480 | 470.00 | 695,600.00 |
| 98 | Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12.5 դասի բետոնից | խմ | 222.0 | 42,277.00 | 9,385,494 00 |
| 99 | Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ) | տն | 12.3 | 422,771 00 | 5,193,319 00 |
| 100 | Խարամաքտոն 45մմ հաստ B-12.5դասի թեթև բետոնով | քմ | 1644 6 | 3,289 00 | 5,408,958.00 |
| 101 | Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ. բիտումի մածիկի վրա | քմ | 1447.8 | 2,348 00 | 3,399,387 00 |
| 102 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ. | քմ | 540.46 | 2,819 00 | 1,523,557 00 |
| 103 | Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ. | քմ | 1104.1 | 3,006 00 | 3,318,925 00 |
| 104 | Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում. սոսնձումով | քմ | 417.12 | 12,213.00 | 5,094,287.00 |
| 105 | Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում | քմ | 16 71 | 12,213.00 | 204,079.00 |
| 106 | Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ | քմ | 16 71 | 3,289.00 | 54,959 00 |
| 107 | Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով | զծմ | 171 8 | 1,409 00 | 242,066.00 |
| 108 | Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատակի երեսապատում. սոսնձումով | քմ | 123.34 | 11,274.00 | 1,390,535.00 |
| 109 | Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ | զծմ | 80 1 | 939.00 | 75,205 00 |
| 110 | Վինիլային (հետերոգեն ՊՎՔ 2մմ հաստ. 0,7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը) | քմ | 768 4528 | 8,925 00 | 6,858,441.00 |
| 111 | Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎՔ 4,5մմ հաստ. 1մմ հաստ. ինոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=100մմ շրիշակների մակերեսը) | քմ | 257 4352 | 13,153.00 | 3,386,045.00 |
| 112 | Կավոլիինից (4.5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է հ=80մմ շրիշակների մակերեսը) | քմ | 116 8 | 9,691 00 | 1,131,909 00 |
| 113 | Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ (շրիշակների պատրաստումով) | քմ | 34 32 | 2,819 00 | 96,748.00 |
| Ընդամենը հատակներ | | | | | 47,459,514.00 |
| Տվյալ | | | | | |
| 114 | Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից | տն | 3.681 | 721,699 00 | 2,656,430 00 |
| 115 | ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թեղի 250x250x10մմ. ամրան Փ12A500C) | տն | 0 181 | 721,701 00 | 130,553 00 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|----------------------|---|----------|---------|----------------|---------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 116 | Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից | տն | 6 616 | 721,699 00 | 4,774,761 00 |
| 117 | Նէ-7—Նէ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C) | տն | 0 196 | 721,697 00 | 141,288 00 |
| 118 | Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ) | տն | 16 043 | 721,700 00 | 11,578,233 00 |
| 119 | Նէ-7—Նէ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C) | տն | 1 137 | 721,699 00 | 820,214 00 |
| 120 | Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով | տն | 27 853 | 11,452 00 | 318,972.00 |
| 121 | Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով | քմ | 1182.7 | 1,666.00 | 1,970,408 00 |
| 122 | Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ, կավարամած) | խմ | 30.9 | 244,267 00 | 7,547,850 00 |
| 123 | Նույնի երեսում (տակից) ՕՇՊ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ. | քմ | 1540.1 | 3,886 00 | 5,984,829 00 |
| 124 | Գոլորշամեկուսիչ շերտի փոստ | քմ | 1540.1 | 222 00 | 341,902.00 |
| 125 | Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքամաբակ սալերով | քմ | 1540.1 | 2,775 00 | 4,273,778 00 |
| 126 | ՕՇՊ սալերի տեղադրում 10մմ հաստ. (քիտումային կղմինդրի հիմնատակ) | քմ | 1781.1 | 6,107 00 | 10,877,178 00 |
| 127 | Քիտումային կղմինդրից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը՝ 40տարի) | քմ | 1781.1 | 10,548 00 | 18,787,043 00 |
| 128 | Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում | խմ | 30.9 | 4,997.00 | 154,407.00 |
| 129 | ՕՇՊ սալի մասնակի լաքապատում | քմ | 297.2 | 2,775 00 | 824,675.00 |
| 130 | Ջրհորդանների պատրաստում 0.5մմ հաստ ցինկապատ թիթեղից, գունավոր ներկվածքով | զծմ | 136.5 | 6,107 00 | 833,606.00 |
| 131 | Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ | հատ | 15 | 7,217 00 | 108,255 00 |
| 132 | Ջրիտ խողովակների տեղադրում 150x150մմ | զծմ | 76.18 | 7,217.00 | 549,791.00 |
| 133 | Էվակուացիոն աստիճանների մոնտաժում | տն | 0.707 | 499,638 00 | 353,244 00 |
| 134 | Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով | տն | 0.707 | 721,699.00 | 510,241 00 |
| Ընդամենը | | | | | 73,537,658.00 |
| Հարկային անվանումներ | | | | | |
| 135 | Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով | քմ | 2484.24 | 2,348 00 | 5,832,996 00 |
| 136 | Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով | քմ | 313.02 | 2,348 00 | 734,971 00 |
| 137 | Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով | քմ | 10.13 | 3,289 00 | 33,324 00 |
| 138 | V-2, V-4, V-5 վիտրաժների վերևի մասի ցափակում գիպսոկարտոնե հարթասալերով | քմ | 12.9 | 6,106.00 | 78,767 00 |
| 139 | Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով | քմ | 891.67 | 2,348 00 | 2,093,641 00 |
| 140 | Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով | քմ | 98.22 | 2,348 00 | 230,621 00 |
| 141 | Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով | քմ | 2516.2 | 1,879.00 | 4,727,925 00 |
| 142 | Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով | քմ | 313.02 | 1,879.00 | 588,165 00 |
| 143 | Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով | քմ | 1316.39 | 1,879 00 | 2,473,497 00 |
| 144 | Առաստաղների բարելավված ներկում լատեքսային ներկով | քմ | 43.04 | 1,879.00 | 80,872 00 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|-----------------|---|-------------|--------|----------------|----------------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 145 | Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով | քմ | 364.66 | 2,348 00 | 856,222 00 |
| 146 | Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով | քմ | 301.16 | 9,395.00 | 2,829,398 00 |
| 147 | Կախովի առաստաղ գիպսաստվարաթղթե հարթասալերով 9.5մմ հաստության, ստատների տեղադրումով | քմ | 424 72 | 7,046.00 | 2,992,577 00 |
| 148 | Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում | քմ հոնոն | 332 | 611.00 | 202,852 00 |
| 149 | Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ | քմ | 55 18 | 7,986 00 | 440,667 00 |
| 150 | Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում | տն | 0.593 | 42,278.00 | 25,065 00 |
| 151 | Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով | տն | 0 593 | 32,883 00 | 19,495 00 |
| Ընդամենը | | | | | 24,241,055.00 |
| 152 | Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների տակ | խմ | 14 6 | 29,599 00 | 432,145 00 |
| 153 | Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով | խմ | 8 4 | 23,915.00 | 200,886.00 |
| 154 | Բետոնե աստիճանների պատրաստում B-7,5 դասի բետոնով | խմ | 8.7 | 38,761 00 | 337,221 00 |
| 155 | Աստիճանների երեսապատում 50մմ հաստ. բազալտե սալերով | քմ | 11 35 | 13,666 00 | 155,109 00 |
| 156 | Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ. բազալտե սալերով | քմ | 51 04 | 14,095 00 | 719,409.00 |
| 157 | Խամքարե զանգվածի պատրաստում թեքահարթակների տակ | խմ | 10 4 | 23,915 00 | 248,716.00 |
| 158 | Նույնի, միաձույլ բետոնե ծածկույթի պատրաստում B-7.5 դասի բետոնով | խմ | 8.7 | 23,914 00 | 208,052.00 |
| 159 | Թեքահարթակի միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7.5 դասի բետոնով | խմ | 8 4 | 23,915 00 | 200,886 00 |
| 160 | Նույնի, միաձույլ ե/բետոնե բազրիքների պատրաստում 120մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնով | խմ | 1 1 | 30,747 00 | 33,822 00 |
| 161 | Ամրան Փ10A500C | տն | 0 123 | 307,468.00 | 37,819.00 |
| 162 | 60x40x3մմ պողպատե ուղղանկյուն խողովակներից բռնածող | տն | 0 079 | 307,466.00 | 24,290.00 |
| 163 | Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով | տն | 0 079 | 307,466 00 | 24,290 00 |
| Ընդամենը | | | | | 2,622,645.00 |
| 164 | Պատերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ (վերին շերտը 30մմ, ստորինը 70մմ հաստ) բազալտե մանրաթելային սալերով | քմ | 1379.7 | 6,167 00 | 8,508,610 00 |
| 165 | V-4, V-5 արտաքին վիտրամների վերևի մասի երեսապատում պլյումինե "Alukobond" թիթեղով | քմ | 3.5 | 25,623.00 | 89,681 00 |
| 166 | Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտի շաղախով մետաղացանցի տեղադրումով | քմ | 1278 8 | 3,843 00 | 4,914,275 00 |
| 167 | Նույնի բարձրորակ ներկում դեկորատիվ, բաց գույնի, ճակատային ներկով | քմ | 1278 8 | 2,562 00 | 3,276,183 00 |
| 168 | Պատերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ խարսխումով | քմ | 119 0 | 25,547 00 | 3,040,093 00 |
| 169 | Պատուհանագոգերի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստ. | քմ | 11.72 | 21,352.00 | 250,139 00 |
| 170 | Բացվածքների լցափակում ապակեբլոկներով | քմ | 0 96 | 12,811 00 | 12,299 00 |
| 171 | Արտաքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում հարդարման աշխատանքների համար | քմ ուղ առոն | 523 | 555 00 | 290,265 00 |

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափ միավ | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|-----|--|----------|-------|----------------|---------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Ընդամենը նրբաթղթի արժեքը | | | | 20,381,545.00 |
| | Ընդամենը նրբաթղթի արժեքը | | | | 6,218,382.91 |
